

# ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՈՒՄ ՍԱՄԱՐՂԱՆԴՈՒՄ

Գեղեցիկ և գոտեպնդիչ մի պահ ստեղծվեց Ուզբեկստանի Սամարղանդ քաղաքում Հայկական Առաքելական Ս. Աստվածածին եկեղեցու օծման հանդիսավոր արարողությամբ: Պատմական եղան այն երկու օրերը, որոնց ընթացքում վերանորոգման մի հոսանք անցավ հազարավոր հայերի հոգիների միջից:

Եկեղեցու օծման սուրբ առաքելությունով, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ, Սամարղանդ էր մեկնել Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես Արքեպս. Պոզապալյանը՝ ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի պաշտոնակատար Լազար Սուջյանի, Տ. Տիրայր քհն. Գըլըճյանի, Բարեշնորհ Անդրանիկ Սրկ. Ժամկոչյանի ուղեկցությամբ:

Ս. Աստվածածին եկեղեցու վերաբացման և օծման հանդիսավոր արարողություններին մասնակցելու նպատակով Սամարղանդ էր մեկնել նաև Հայաստանի պաշտոնական պատվիրակությունը, որի կազմում էին՝ ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Վարդան Օսկանյանը, ՀՀ մշակույթի փոխնախարար Միքայել Ստամբոլցյանը, ՀՀ փոխնախագահի օգնական Էդվարդ Ղազարյանը, մշակութային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ս. Աստվածածին եկեղեցին, կառուցված 1903 թվականին, տարիներ շարունակ անուշադրության մատնվելով, գտնվում էր լիովին ավերված վիճակում:

Օգոստոսի 19-ի երեկոյան հանդիսավոր պայմաններում տեղի ունեցավ Ս. Աստվածածին եկեղեցու դռնբացեքի արարողությունը՝ ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի: Արարողությունից հետո Սրբազան Հայրը կատարեց երեկոյան ժամերգություն: Եկեղեցու կամարների ներքո երկար տարիների ընդմիջումից հետո վերստին հնչեց հայ հոգևոր երաժշտությունը՝ նոր շունչ հաղորդելով նրա սուրբ քարերին:

Հաջորդ օրը, կիրակի առավոտյան, բազմահազար հայ հավատացյալների, պաշտոնական այրերի, մշակութային, հասարակական և այլ կազմակերպությունների անդամների ներկայությամբ Սրբազան Հոր ձեռքով կատարվեց Ս. Աստվածածին եկեղեցու օծումը:

Օծման ս. արարողությունից հետո եկեղեցու բակում տեղի ունեցավ մեծ հանդիսություն, որին մասնակցում էին և ողջույնի խոսք ասացին Սամարղանդի մարզխորհրդի նախագահ Բուլաթ Աբդուռահմանովը, Ուզբեկստանի Հանրապետության արտաքին գործերի փոխնախարար Շաֆգաղի Խարագուլովը, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի փոխնախարար Վարդան Օսկանյանը, հայ համայնքի անդամներ: Հանդիսավոր արարողության ժամանակ Ուզբեկստանի Հանրապետության նախագահ պրն. Քարիմովի հատուկ ներկայացուցիչը ընթերցեց նախագահի ուղերձ-նամակը:

Այնուհետև նորաօծ եկեղեցում Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը մատուցեց ս. պատարագ և քարոզ խոսեց: Սրբազան Հայրը նախ փոխանցեց Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա. Հայրապետի օրհնությունն ու պատգամը, ապա շնորհակալություն և գնահատանքի խոսք ասաց Ուզբեկստանի նախագահին, մարզի և քաղաքի ղեկավարներին՝ հայ համայնքի նկատմամբ ցուցաբերած հարգալից և ուշադիր վերաբերմունքի համար: Դրվատանքի խոսք ասաց եկեղեցու բարերար, սամարղանդցի գործարար Արթուր Մարտիրոսյանին, որի անմիջական հովանավորությամբ և աջակցությամբ էր իրականացվել եկեղեցու երկրորդ ծնունդը, հայ համայնքի անդամներին՝ իրենց հայրենանվեր և աստվածահաճո ձեռնարկումի համար:

Սրբազան Հայրն ընդգծեց, որ Ս. Աստվածածին եկեղեցու վերածնունդը կարևորվում է նախ և առաջ նրանով, որ այն հանդիսանում է միակ հայկական գործող եկեղեցին Միջին Ասիայի ողջ տարածքում: «Թող նոր շուքով ու շնչով հառնի Աստծո այս նորաբաց օջախը և լույս տա ձեր բոլորի հոգիներին». այս մաղթանքով ավարտեց իր խոսքը Սրբազան Հայրը:

Այսպիսով մի նոր էջ բացվեց Միջին Ասիայի հայ ժողովրդի պատմության մեջ: